ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 06 -Լ 4002 «01» մարտի 2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 04-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի փետրվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներքին գործավարության կարգը հաստատելու մասին» N 04-Ն հրամանով հաստատված հավելվածի N 3՝

1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Շրջանագծի երկայնքով «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Министерство образования, науки, культуры и спорта Республика Армения RA Ministry of Education, Science, Culture and Sport» դրոշմով, հարկ վճարողի հաշվառման համարով և կենտրոնում ՀՀ զինանշանի պատկերով կլոր կնիքը պահվում է Ընդհանուր բաժի պետ մոտ, ով պատասխանատու է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) և գլխավոր քարտուղարի կողմից ստորագրված և կնքման ենթակա փաստաթղթերը, հրամանները, հրամանների

հավելվածները, պայմանագրերը և լիազորագրերը, ինչպես նաև նախարարի տեղակալների, գլխավոր քարտուղարի տեղակալների, լիցենզավորման գործակալության պետի կողմից ստորագրված և կնքման ենթակա փաստաթղթերը, հրամանները, հրամանների հավելվածները, պայմանագրերը, լիցենզիայի անբաժանելի մասը հանդիսացող ներդիրները կնքելու համար:»:

ՆԱԽԱՐԱՐ՝ Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ